

**Արտատպված Է՝ Շուրմ-Ալեյխեմ, Վիպակներ և պատմվածքներ, Ե.,
Հայպետհրատ, 1964: Ռուսերենից թարգմանեց՝ Օլգա Սանահյանը:**

ՆԵՄԵՑԸ

Ես ինքս, ուրեմն, ինչպես արդեն ասել եմ, դերաժնյացի եմ, այսինքն՝ Դերաժնյայից. դա մի փոքր ավան է Պոդոլսկի նահանգում, շատ փոքր: Հիմի, ճիշտ է, Դերաժնյան քաղաքի նման մի բան է՝ իր երկաթուղագծով, կայարանով... Երբ որ Դերաժնյան կայարան դարձավ, ամբողջ աշխարհը մեզ նախանձեց, հանաք բան հո չի՞— երկաթուղային կայարան: Մտածում էին, ահա թե մարդիկ որտեղ կսկսեն փող վաստակել: Բեռներով ոսկի կդիզեն, կբախտավորվեն: Հարևան գյուղերից ժողովուրդ էր, որ թափվեց: Տնատերերը սկսեցին իրենց տները մեծացնել, նոր խանութներ սարքել, մսի գինը բարձրացրին, սկսեցին մտածել նոր մսագործի, նոր սինագոգի մասին, նրա մասին, որ նոր հողակտոր միացնեն հին գերեզմանատանը, մի խոսքով, շա՛տ զվարճալի էր: Հանաք բան հո չի՞. հալա մեկ ասացեք կայարան, գնա՛ցք, երկաթուղագի՛ծ...

Ճիշտ է, կառապանները սկզբում խիստ դժգոհ էին երկաթուղուց և խելքներին փչեց աղմուկ բարձրացնել, բայց թե նրանց հարցնողն ո՞վ էր: Գծերը գցեցին, վագոններ բերեցին, կայարան սարքեցին, զանգ կախեցին, մի հատ էլ տախտակ խփեցին՝ «Դերաժնյա կայարան», ու հիմի գնացեք ու պատերին բողոքեցեք:

Երբ գնացքները սկսեցին երթևեկել, մի օր կնիկս ինձ հարցնում է:

— Ի՞նչ ես մտադիր անել, Իոնել: (Իմ անունը Իոննա է):

— Ի՞նչ պիտի անեմ,— պատասխանում եմ:— Ինչպես բոլորը, Էնպես էլ ես: Դերաժնյայի բոլոր հրեաները թափվել են կայարան, ես էլ նույնը կանեմ:

Ձեռնափայտս վերցրի, գնացի կայարան և, կամոքն աստծո, դարձա «կառավարիչ»: Ի՞նչ է նշանակում «կառավարիչ»: Ահա թե ինչ. ասենք, մեկը մի վագոն ցորեն է առել, նա պետք է վագոնը բարձի և ուղարկի, ահա ուրեմն, հենց դրա համար էլ գոյություն ունի «կառավարիչ» ասածը: Բայց քանի որ Դերաժնյայի բոլոր հրեաները «կառավարիչ» են դարձել, դրա համար էլ անտանելի դրություն է, մարդիկ տանջվում են, ոտի վրա քարշ գալով հալումաշ լինում. զորօրինակ՝ ասենք, մի գյուղացուց մի պարկ հացահատիկ ես առել և ծախում ես տեղնուտեղը, առանց միջնորդի, կամ կշահես, կամ կկորցնես, մյուս անգամ էլ, մի ինչ-որ արգելք է լույս ընկնում միջնորդների գլխին պատուհաս, մեկ սա, մեկ նա... Անտանելի է: Ճարդ ի՞նչ է: Ճիշտ է, առաջներում էլ գործ չկար, բայց Էն ժամանակ երկաթուղի չկար և Էնքան էլ վիրավորական չէր, համենայն դեպս... Ասացե՛ք խնդրեմ, ախր երկաթուղին, կայարանը, գնացքի զանգը և ես ամբողջ հարայ-հրոցը ինչների՞ս էր պետք:

Եվ ահա մի Եսպիսի պատմություն տեղի ունեցավ... Մի անգամ վրդովված կանգնած եմ կայարանում, փոստային գնացքն եմ ճանապարհում: Երրորդ զանգը արդեն խփել է, շոգեմեքենան սուլեց, խողովակից գոլորշի արձակեց, ու մեկ էլ տեսնեմ, կառամատույցում մի ինչ-որ պարոն է կանգնած, բարձրահասակ, լղար, վանդականախշ տաբատով, բարձր շյապայով և բազմաթիվ ճամպրուկներով: Կանգնել է վիզը ձգած, շվարած չորս կողմն է նայում: «Ես պարոնը, երևում է, մի որևէ բանի կարիք ունի»,— մտածեցի ես ու կարծես մեկը ետևիցս հրեց, թե՛ «Գնա ու հարցրու, տես ի՞նչ է ուզում»: Եվ հենց որ տեղիցս շարժվեցի, նա էլ եկավ ընդառաջ, շյապան բարձրացրեց և գերմաներեն, բառերը երկարացնելով, ինձ ասաց.

— Գուժ մո-են, մայն հեր: (Բարի օր ձեզ, հավանաբար, ողորմած տեր):

— Թող աստված ձեզ բարի տա,— պատասխանում եմ ես նույնպես գերմաներեն, մի քիչ հրեերեն, իսկ մնացածը՝ ձեռքերով:

Ես հարցնում եմ, թե որտեղից է գալիս: Իսկ նա՝ թե արդյոք չգիտե՞մ որևէ կարգին բնակարան «շտանցիոն» նրա համար:

— Դե, իհարկե,— ասում եմ:— Ինչո՞ւ պիտի չգիտենամ:

Բայց ես ինքս ինձ մտածում եմ. «Ա՛խ, հազար ափսոս, որ մի իջևանատուն չունեմ: Եթե իջևանատուն ունենայի, ես սրան կհրավիրեի ինձ մոտ: Հրաշալի գերմանացի է երևում, հնարավոր կլիներ մի որոշ բան վաստակել...»: Բայց նույն միջոցին մի ուրիշ միտք էլ է ծագում: «Հիմարի գլուխ, ինչ է, ճակատիդ գրվա՞ծ է, թե դու իջևանատուն չունես: Թող քեզ թվա, որ տունդ իջևանատուն է»: Եվ ես կեսը գերմաներենով, կեսը հրեերենով, իսկ մնացածը՝ ձեռքերով, դիմում եմ նրան.

— Եթե կցանկանաք, մայն հեր, հրամայեցեք կառք վարձել, և ես ձեզ կտանեմ մի շատ լավ հյուրանոց, «շտանցիոն», ինչպես ասում են՝ առաջին սորտի:

Լսելով նման խոսքեր, գերմանացիս փայլեց և ձեռքով բերանը ցույց տալով, ասաց.

— Ձեզ մոտ ուտելու բան կգտնվի՞: «Շպայգեն»:

— Ամենալավ «շպայգեն»,— պատասխանում եմ ես:— Դուք, պարոն նեմեց, եթե աստված կամենա, մեծ բավականություն կստանաք, որովհետև իմ կնիկը, այսինքն՝ «Ֆրաու», հրաշալի «մայստեր» է, նրա թխվածքները, մուրաբաները մեծ համբավ ունեն... Նրա եփած ձուկը ինքը, կայսերն էլ կուտի, այսինքն՝ Արտաքսերքսես¹ արքան...

— Յավո՛ւ²,— ուրախացած ասում է նեմեցը, և այդ ասելիս աչքերը փայլում են, իսկ դեմքը արևի նման լուսավորվում:

«Խելքով նեմեց է»,— մտածում եմ ես ու, առանց դեսուդեն ընկնելու, կառք եմ վարձում և ուղղակի բերում իմ տուն:

Տանը կնկանս պատմում եմ, որ աստված ինձ մի աննման հյուր է դրկել, մի նեմեց: Բայց արդյոք կնիկ ասածդ որևէ բան հասկանո՞ւմ է: Նա սկսում է ձայնը գլուխը գցել, որովհետև մենք վրա էինք հասել հենց էն չար ժամին, երբ տանը տակից գլուխ մաքրություն էր կատարվում:

— Հյուրն էր պակա՛ս: Որտեղի՞ց լույս ընկավ:

— Ա՛յ կնիկ, սուս կաց,— ասում եմ ես,— մեր լեզվով մի խոսիր, որովհետև պարոնը հասկանում է:

Բայց նա ինձ լսո՞ղն է, երբ նրա մաքրություն անելը բռնել է: Որ ավելը թափ չի տալիս քթներիս առաջ ու քրթմնջում: Նա քրթմնջում է, իսկ ես գերմանացուս հետ կանգնած եմ դռների առաջ. ոչ դես, ոչ դեն... Մի կերպ հաջողվեց կնկանս հասկացնել, որ նեմեցը ձրի չի ապրելու, որ փողով է մնալու, և կարելի կլինի մի որոշ բան վաստակել... Կարծում եք գործը գլո՞ւխ եկավ: Երբ ես նրան մի կերպ համոզեցի, նա հարցնում է.

— Իսկ նրան որտե՞ղ պիտի տեղավորեմ: Գերեզմանո՞ւմ:

¹ Արտաքսերքսես—պարսից արքա, աստվածաշնչի «Եսթեր» գրքի կերպարներից:

² Այստեղ՝ «հրաշալի է» իմաստով:

— Սո՛ւս արա: Հիմար կնիկ: Քեզ ասացին՝ ձայնդ քեզ քաշիր: Նա ամեն ինչ հասկանում է:

Վերջապես գլխի ընկավ թե բանն ինչումն է, և մենք նրան զիջեցինք կողքի սենյակը, ու կինս իսկույն ևեթ սկսեց ինքնաեռը տաքացնել, ընթրիք պատրաստել:

Սկզբում, երբ գերմանացիս մեր սենյակը տեսավ, ճիշտ է, քիթը մի քիչ կնճռոտեց, կարծես ուզենալով ասել. «Կարող էր լինել և ավելի լավը», բայց թե ինչ կարող է հասկանալ. նեմեց-պերեց-կալբասա... Ինքնաեռը բերեցին, թեյ սարքեցին, իսկ Նա մի լավ շիշ ռոմ հանեց ու խմեց (ինձ էլ հյուրասիրեց), և ջուրը ճամփա ընկավ: Նեմեցը իրեն բոլոր ճամպրուկներով հանդերձ մեկնվեց ինչպես իր հոր խաղողի այգում³, և մենք բարեկամացանք:

Թեյից հետո զրույց եմ սկսում սրանից, նրանից, թե ինչ է անում մեզ մոտ: Ինչ է ծախում: Միգուցե ուզում է մի բան առնել կամ մի որևէ բան ծախել: Պարզվում է, որ ոչնչի կարիք չունի: Ինչ-որ մեքենաներ,— ասում է նա,— պետք է զննի,— դատարկ բաներ, հերվա ձյուն. եղ միջոցում նա անվերջ նայում է վառարանին և հարցնում ուտելիքը պատրա՞ստ է:

— Դուք,— ասում եմ ես,— պարոն նեմեց,— երևում է ուտելու մեջ ուստա եք:

Նա ինչ-որ բան է ասում՝ անկապ, անկապ. եղ հաստակող նեմեցներին մի բան ասես, իսկի կհասկանա՞ն: Վերջապես սեղան զգեցին, ընթրիք տվեցին. թարմ արգանակ՝ գրենկաներով⁴, խաշած հավ՝ ձավարով, գազարով ու մաղդանոսով և... (Կինս, երբ որ քեֆն ուզի, կարողանո՞ւմ է):

— Փա՛ռք ի բարձունս,— ասում եմ ես հին հրեերեն:

Բայց նրա բերանից ծպտուն էլ է չի լսվում, վրա է հասնում հավին, ոնց որ մեծ պասից հետո:

— Փա՛ռք ի բարձունս: Էլ հրավերի մի սպասեք: Բարի ախորժա՛կ,— կրկնում եմ ես:

Բայց նա սուսուփուս գլուխն է քաշում արգանակը, ու նույնիսկ շնորհակալություն էլ չի հայտնում...

«Հաստագլո՛ւխ»,— ասում եմ մտքումս:— Եվ կարգին էլ շատակեր է:

Մի խոսքով, կերավ ու սկսեց քաշել երկար ծխամորճը. նստել է ու ժպտում է: Տեսնում եմ, որ նեմեցս շուրջն է նայում, երևում է, մտիկ է տալիս, թե գլուխը որտեղ դնի: Իսկ աչքերը փակվում են, հանգիստ են ուզում:

Ես կնկանս աչքով արի. «Որտեղ, այսինքն, տեղավորենք»:

— «Ի՞նչ է նշանակում «որտեղ»: Քո մահճակալին»: Եվ մի թեթև մտածելուց հետո գնում է և անկողինը պատրաստում, բարձն է փափկացնում, ուռցնում ինչպես որ կարգն է (իմ կնիկը, եթե ուզենա, կարողանո՞ւմ է): Նայեմ, որ նեմեցս ինչ-որ դժգոհ է, նրան դուր չի գալիս, երևում է, որ բարձերի փետուրները թռչում են. քիթը ոլորում է և սկսում փռշտալ, էն էլ ո՞նց փռշտալ:

— Առողջությո՛ւն, պարոն նեմեց,— ասում եմ ես նրան:

³ Հրեական ասացվածք՝ ծաղրական իմաստով: Հիմքում ընկած է աստվածաշնչի հետևյալ լեզենդը. «Ջրհեղեղից փրկվելով, Նոյը սկսում է հող մշակել և որթատունկ աճեցնել: Նա գինի է խմում, հարբում և մերկացած պառկում իր վրանում»:

⁴ Գրենկա — կտրտած, բոված հաց, որ զգում են ապուրի մեջ:

Դուք կարծում եք, թե պատասխանում է կամ ասում է շնորհակալություն: Ի՞նչ շնորհակալություն: «Անտա՛շի մեկը,— մտածում եմ ինքս ինձ,— համ էլ վայրենի»:

Կնիկս նրա համար մի անկողին սարքեց, որ քիչ էր մնում առաստաղին հասներ (նա, եթե ուզում է, կարողանո՞ւմ է): Բարի գիշեր մաղթեցինք մեկմեկու ոնց որ պետքն էր ու գնացինք քնելու:

Սկզբում, երբ որ պառկեցինք, լսում եմ, որ իմ նեմեցը աչքով չտամ, քաղցր քնած է ու խռմփացնում է, հետո ինչ-որ տարօրինակ ֆշշում է շոգեմեքենայի նման, սուլում է ու խռխռում ոնց որ մորթվող եգ, ու հանկարծ տեղում վեր է թռչում, հազում, գկռտում, ֆնչացնում, քորվում, թքոտում ու քրթմնջում, հետո շուռ է գալիս մյուս կողքին ու նորից խռմփում, ֆսսացնում, շվկացնում և նորից տնքալով վեր թռչում, փնչացնում, քորվում, թքոտում ու քրթմնջում... Եվ եղպես մի քանի անգամ իրար ետևից, իսկ հետո, որ մահճակալից վեր չի թռչում, և ես լսում եմ, որ իմ նեմեցը իրար ետևից բարձերը հատակին է շարտում և մի առանձին կատաղությամբ ինչ-որ տարօրինակ, անհասկանալի բառեր ասում. «Ցում թոյֆեի⁵: Սակրամենտո⁶: Դոններ-վետտեր»⁷: Վազում եմ դռան մոտ, անցքից նայում, իմ նեմեցը կանգնած է հատակին՝ ինչպես որ մորից ծնվել է, բարձերը մահճակալից վերցնում, շարտում է հատակին, թքում և իր լեզվով անեծք է, որ բերանից թափում է. տե՛ր իմ աստված, դու փրկես ու ողորմաս:

— Ի՞նչ է պատահել, պարոն նեմեց,— ասում եմ ես ու դուռը բացում:

Էստեղ նա ձեռքերը բռունցք արած որ վրա չի հասնում, ուզում է թե բանհոքի անի... Ձեռքիցս բռնում է, տանում լուսամուտի մոտ ու ցույց տալիս, թե ոնց են իրեն կծոտել, հետո ինձ դուրս է անում և դուռը շրխկացնում:

— Սա ի՞նչ խելառ նեմեց է,— ասում եմ ես կնկանս:— Շատ նազուկն է: Նրան թվում է, թե կծոտել են, ու դրա համար իրեն ուտում է...

— Կծո՞ղ որտեղից,— զարմանում է կնիկս:— Խելքս չի հասնում: Ախր հենց զատկին եմ անկողինը լվացել ու մահճակալն էլ նազթով մաքրել, հանկարծ ոչ դես, ոչ դեն՝ լվեր...

Առավոտյան ես կարծեցի, թե իմ նեմեցը կգայրանա ու մեր մոտից կճղի՝ ուր աչքը կտրի. Իսկի էլ չէ: Նորից՝ «Գուռ-մո-են»: Ժպտում է, ֆսսալով ծխամորճը քաշում, հրամայում ճաշ պատրաստել, իսկ մինչ այդ, նախաճաշին պատվիրում է թերիաշ ձվեր, ի՞նչ եք կարծում, որքան: Տասից մի չոթ պակաս: Նախաճաշին մի լավ խմում է, ինձ էլ հյուրասիրում շնապսով, և նորից հաշտ ու բարիշ ապրում ենք: Իսկ երբ գիշերն եկավ, նորից նույն պատմությունը: Սկզբում խռմփաց, սուլեց, ֆսսաց ու խռխռաց, հետո տնքաց, ախ ու վախ արեց, ֆնչացրեց, քորվեց, թքեց ու մրթմրթաց: Հետո վեր թռավ, ամբողջ անկողինը հատակին թափեց գայրացավ ու հայիոյեց իր լեզվով. «Ցում Թոյֆեի: Սակրամենտո: Դոններ-վետտեր»: Իսկ առավոտյան՝ նորից «Գուռ-մո-են»: Նորից ֆսսալով ծխամորճ քաշեց, ժպտաց, կերավ, խմեց, ինձ հյուրասիրեց... Եղպես անցավ մի քանի օր, մինչև որ ժամանակը եկավ: Մեքենաները հաջողությամբ գննել են, և հարկավոր է, որ արդեն գնա:

Երբ մեկնելու ժամը հասավ, նեմեցը սկսեց իրերը հավաքել և խնդրեց, որ հաշիվ ներկայացնեմ իրեն:

— Իսկ ի՞նչ պիտի հաշվեմ,— ասում եմ ես:— Հաշիվս մեծ չէ: Ձեր հաշիվը, պարոն նեմեց, անում է, ուղիղ քառորդ թղթադրամ...

⁵ Գրողի ծոցը գնա (գերմ.):

⁶ Անիծված լինես (իտալ.):

⁷ Որոտ ու կայծակ (գերմ.):

Նա աչքերը գցեց երեսիս, կարծես ուզենալով ասել— «Հը՞: Չեմ հասկանում»:

Այդ ժամանակ ես բացատրում եմ գերմաներեն:

— Ստիպված պիտի լինեք, պարոն գերմանացի, քսակը բանալ ու վճարել, ուրեմն, քսանհինգ ռուբլի, այսինքն՝ «ֆինֆ ունդ ցվանցինգ ռուբլի»:

Եվ ցույց եմ տալիս մատներով՝ տասը, տասը և հինգ:

Կարծում եք շա՞տ զարմացավ: Հե՛չ, որ ասես: Ֆասացնում է ծխամորճը, ժպտում և ասում, որ կցանկանար իմանալ, թե ինչի՞ համար է իրենից քսանհինգ ռուբլի պահանջվում: Վերցնում է մատիտը, մի կտոր թուղթը և խնդրում, որ մանրամասն ասեմ:

«Դու, իհարկե, խելքով նեմեց ես,— մտածում եմ ես,— բայց թե իմ խելքը քոնից շատ է: Էնքան խելք, ինչքան որ իմ ձախ կրնկի մեջ կա, քո գլխումն էլ իսկի չկա»:

— Բարի եղեք, գրեցեք, պարոն նեմեց,— ասում եմ ես,— բնակարանի համար, այսինքն՝ «շտացիոն», վեց օրվա համար մեկուկեսով հաշված, կլինի, ուրեմն ինը ռուբլի: Օրական երկու անգամ ինքնաեռ՝ տասներկու, մեկուկես ալտինսիկով՝ ինսուռն կոպեկ: Վեց անգամ տասը ձու առավոտյան և տասը՝ երեկոյան— հարյուր քսան հատ, երկուական կոպեկով, այսինքն՝ երկու արկղ, արկղը մեկ ռուբլով, երկու ռուբլի: Վեց արգանակ, վեց հավ, հատը հինգ ալտինսիկ, չհաշված ձավարը, գրենկան, մաղդանոսը, սոխը, սա, նա և մնացած բաներով՝ ուղիղ վեց ռուբլի: Վեց գիշեր, վեց անգամ լամպ վառել՝ վաթսուն կոպեկ: Շնապսը դուք ձերը խմեցիք— երկու ռուբլի: Թեյ և շաքար չեք վերցրել— մեկ ռուբլի, ընդամենը արեց երեք ռուբլի: Գինի չեք պահանջել՝ մեկ ռուբլի, արեց չորս: Գարեջուր չի եղել՝ յոթանասունհինգ կոպեկ: Ընդամենը անում է հինգ ռուբլի... Բայց որպեսզի հաշիվը տեղը գա, ավելացրեք հինգ ու հիսուն: Դե, պարոն նեմեց, ընդհանուր գումարով մի՞թե քսանհինգ ռուբլի չի անում...

Եղպես ասում եմ միանգամայն լուրջ, իսկ նա, կարծում եք մի բառ էլ է ասե՞ց: Աստվա՛ծ ազատի: Ծխամորճը ֆասոցով քաշեց, ժպտաց, հանեց մի քսանհինգանոց ու շարտեց, ինչպես կշարտեն երեքանոցը: Հետո ոնց որ պետքն էր, պատվով, հարգանքով մնաս բարով արեցինք, և նա գնաց...

— Ի՞նչ կասես, այ կնիկ, ես տեսակ նեմեցի մասին,— ասում եմ ես կնկանս:

— Թող աստված ամեն շաբաթ հենց դրա նման նեմեց ուղարկի, իսկի վատ չէր լինի...

Նեմեցը գնաց: Չէր անցել երեք օր, ինձ մոտ է գալիս փոստատարը և նամակ բերում, բայց պահանջում է վճարել տասնչորս կոպեկ: Ինչի՞ համար: Մոռացել են, ասում է դրոշմանիշ կացնել: Տասնչորս կոպեկը վճարեցի, ծրարը բաց արի, բայց նամակը գրված է գերմաներեն, մի բառ անգամ չեմ հասկանում: Նամակը ձեռքս առած դեսուդեն եմ գնում, բայց մեկը չկա, որ գերմաներեն կարդալ իմանա: Փորձանք է: Մեր ամբողջ քաղաքը ոտքի տակ տվեցի, վերջապես դժվարությամբ ճարեցի դեղատան պրովիզորին, որը գերմաներեն հասկանում է: Նամակը կարդաց ու ասաց, որ գրողը մի ինչ-որ նեմեց է, նա շատ ու շատ շնորհակալություն է հայտնում հանգիստ ու հարմար «շտանցիոնի» համար, որը ունեցել է մեզ մոտ, շնորհակալություն է հայտնում հյուրընկալության և սիրալիր վերաբերմունքի համար, որոնք երբեք չի մոռանալու... «Դե, ի՞նչ, մտածում եմ. շատ հաճելի է: Եթե դու գոհ ես, դա ինձ ուրախացնում է»: Իսկ կնոջս ասում եմ:

— Ոնց է, հավանո՞ւմ ես նեմեցին: Վնաս չունի, սարսաղի մեկն է, աչքով չտամ:

— Աստված թող ամեն շաբաթ հենց դրա նման սարսաղներ ուղարկի, իսկի վատ չէր լինի...

Մի շաբաթ էլ անցավ: Կայարանից տուն եմ գալիս, կինս մի նամակ է տալիս ինձ ու ասում, որ փոստատարը պատվիրել է քսանութ կոպեկ վճարել:

— Ինչո՞ւ քսանութ:

— Ինչ իմանամ,— պատասխանում է,— դրանից պակաս չցանկացավ վերցնել:

Բաց եմ անում նամակը, նորից գերմաներեն է: Վազ եմ տալիս իմ պրովիզորի մոտ և խնդրում նրան կարդալ: Կարդաց: Նույն նեմեցը գրում է, որ սահմանն անցել է, և քանի որ արդեն գնում է իր տունը, իր «ֆատերլանդը», ապա շնորհակալություն է հայտնում ինձ, հարմար ու հանգիստ «շտանցիոնի» համար, մեր հյուրընկալության և սիրալիր վերաբերմունքի համար, որոնք նա երբեք չի մոռանա:

«Այ չոռ ու ցավս թափվի գլխիդ հա՛»,— ասացի մտքումս:

Գալիս եմ տուն, կնիկս հարցնում է.

— Էդ ինչ նամակ էր:

— Նորից էլի,— ասում եմ,— Էն նեմեցն է: Մոռանալ չի կարողանում Էն բարերարությունը, որ նրան ցույց ենք տվել: Նեմեց մի ասա, մի խելագար ասա:

— Թող աստված ամեն շաբաթ հենց էդտեսակ խելագարներ ուղարկի,— ասում է,— իսկի վատ չէր լինի...

Անցավ ևս երկու շաբաթ: Փոստից մի մեծ նամակ են բերում, և փոստատարը կարգադրում է հիսունվեց կոպեկ վերավճար տալ: Ես, իհարկե, չեմ ուզում:

— Ինչպես կցանկանաք,— ասում է փոստատարը և նամակը վերցնում:

Դա ինձ վիրավորական է գալիս: Շատ եմ ուզում իմանալ, թե, ախր, որտեղի՞ց է նամակը, միգուցե մի կարևոր բան է գրված: Վճարեցի հիսունվեց կոպեկը, բաց արի ծրարը, նայեցի՝ նորից գերմաներեն: Գնում եմ, իհարկե, իմ պրովիզորի մոտ, ներողություն եմ խնդրում, որ ամեն անգամ գլխացավանք եմ պատճառում, բայց ճարս ինչ, աստված է պատժել, գերմաներեն չգիտեմ: Իսկ սա ինձ կարդում է մի ամբողջ ուղերձ, նորից նույն նեմեցից. այնքանով, որքանով որ հասել է տուն, տեսնվել իր սիրասուն գերդաստանի հետ, իր «ֆրաուի» և երեխեքի հետ, նա պատմել է, թե ինչպես է օրերը անցկացրել Էստեդ: Դերաժնյայում, թե ոնց եմ կայարանում իրեն հանդիպել, ոնց եմ տարել տուն և հատկացրել մի հանդարտ ու հարմար «շտանցիոն»... Էնպես որ, շատ ու շատ շնորհակալություն է հայտնում մեզ մեր հյուրընկալության և սիրալիր վերաբերմունքի համար, որոնք նա չի մոռանա մինչև կյանքի վերջը:

— Թո՛ւ, գրողը տանի քեզ, և սրտումս ինչ որ կա, դուրս եմ թափում, իսկ կնկանս էլ, նամակի մասին ոչ մի բան չեմ ուզում ասել, ոնց որ ոչ նամակ է եկել, ոչ էլ:

Մի երեք շաբաթ էլ անցավ: Փոստից անդորրագիր եմ ստանում, որի համար պիտի վճարեմ մեկ ռուբլի քսան կոպեկ:

— Սա ի՞նչ մեկ ռուբլի քսան կոպեկ է,— հարցնում է:

— Ի՞նչ իմանամ:

Վազում եմ փոստ և սկսում հարցնել, թե որտեղից է ստացվել մեկ ռուբլի քսան կոպեկը: Իսկ ինձ պատասխանում են, որ ոչ թե պետք է ստանամ, այլ պարտավոր եմ վճարել:

— Ինչի՞ համար:

— Նամակի,— ասում են:

Չեն պատասխանում: Մի խոսքով: Խոսքն ու գրույցը էստեղ օգուտ չունի, վճարեցի մեկ ռուբլի քսան կոպեկը և նամակն ստացա. ծրար է: Բաց եմ անում — նորից նրանից է՝ գերմանացուց: Գալիս եմ պրովիզորի մոտ:

— Վիրավորական թող չթվա, պանե,— ասում եմ,— նորից փորձանք է եկել գլխիս, նեմեցը նամակ է ուղարկել:

Պրովիզորը, նա էլ պակաս հիմարը չէ, թողնում է իր գործը և կարդում նամակը, որ գրել էր նույն նեմեցը, ա՛յ ոչ ու փուչ լինի, հա՛: Իսկ ինչ է գրում: Գրում է, որ էսօր իրեն տանը «ֆեյերտագ» է, այսինքն՝ տոն, հյուրեր են եկել, ամբողջ ընտանիքը հավաքվել է, և ահա նա պատմել է նրանց եղ ամբողջ պատմությունը՝ սկզբից մինչև վերջ, թե ոնց է ժամանել Դերաժնյա փողբիկ քաղաքը, թե ոնց է մենակ կանգնած մնացել օտար երկրում, որի լեզուն չգիտեր, թե ոնց եմ նրան հանդիպել ու տարել ինձ մոտ, հատկացրել մի հարմար ու խաղաղ «շտանցիոն», թե ինչպես սիրալիր ենք ընդունել, տվել մեր ամենալավ սենյակը, կերցրել ենք, խմեցրել և շատ ազնվորեն, բարեխղճորեն հաշիվ տեսել: Ուստի նա չի կարող իրեն զրկել այն բավականությունից, որ մի անգամ ևս շնորհակալություն չհայտնի մեր հյուրընկալության և բարեսրտության համար, որը հավիտյանս չի մոռանա...

«Մուռտառի մեկն է եղել եղ նեմեցը,— մտածեցի ես: Այլևս ոչ մի նամակ չեմ վերցնի, թեկուզ ոսկի էլ լինի»:

Անցավ մեկ ամիս, անցավ երկու ամիս. նամակ չի գալիս, վե՛րջ: Ես արդեն սկսել էի նեմեցին մոռանալ: Եվ հանկարծ երկաթուղային կայարանից ծանրոցի անդորրագիր եմ ստանում, թանկագին, քսանհինգ ռուբլի արժողությամբ:

«Դա ի՞նչ կարող է լինել»,— գլուխ եմ կոտրում ես, ինձ հետ միասին կնիկս էլ է տարակուսանքի մեջ ընկնում, բայց մենք ոչ մի բան չենք կարողանում ենթադրել: Հանկարծ միտքս է գալիս, որ ազգականս Ամերիկայում է... Միգուցե, եղ նա է նվեր ուղարկել կամ շիֆսքարտ⁸, կամ վիճակախաղի տոմս... Չծուլացա, եկա կայարան և ուզում եմ ծանրոցը ստանալ: Իսկ ինձ ասում են, որ ես բարի լինեմ վճարել երկու ռուբլի քսանչորս կոպեկ, նոր միայն ծանրոցը կստանամ: Ճարս ինչ. հարկավոր է ճարել երկու ռուբլի քսանչորս կոպեկ և ստանալ: Մի խոսքով, ծանրոցն ստացա, մի փառահեղ արկղ, սիրուն էլ կապած: Վազում եմ տուն, սկսում եմ բաց անել և միջիցն ընկնում է մի դիմանկար... Նայեցինք... Ա՛խ, գրողի ծոցը գնաս դու: Նա է: Նեմեցը՝ լուրջ վզով, բարձր գլխարկով, ծխամորժը բերանին: Նկարի հետ էլ նամակ կա, գերմաներեն, իհարկե, նորից նույնը, շնորհակալություն է հայտնում «շտանցիոնի» համար, մեր հյուրընկալության և սիրալիրության համար, որոնք նա իր կյանքում չի մոռանա... Ա՛յ թե ինչի է ընդունակ մարդ արարածը: Ա՛յ տեսնեմ՝ վառվի, մոխիր դառնա: Դուք արդեն կարող եք պատկերացնել, աշխարհի տակին էլ անեծք չմնաց, որ չտվեցինք ամբողջ սրտով: Գոնե կեսը կատարվեր, ողորմա՛ծ աստված:

Դրանից հետո անցավ ևս մի քանի ամիս. վերջ, չկա այլևս նեմեցը: Փա՛ռք քեզ տեր աստված, ազատվեցինք պատուհասից, գետնի տակն անցնի նա: Ես մեռածս տեղից

⁸ Օվկիանոսային շոգենավի անցատոմս:

Նորից հարություն էի առել: Բայց դուք կարծում եք, թե բոլորն ասացի՞, համբերեցե՞ք, դեռ վերջը չի եկել: Ոչ շատ վաղուց, մի գիշեր հեռագիր եմ ստանում. անպայման և որքան հնարավոր է անհապաղ եկեք Օդեսա, ոմն վաճառական Գորգելշտեյնի մոտ: Նա իջել է «Վիկտորիա» հյուրանոցը, և ես մի գործի կապակցությամբ խիստ պետք եմ նրան:

— Օդեսա: Գորգելշտեյն: «Վիկտորիա» հյուրանոց: Գործ: Դա ի՞նչ է նշանակում,— դիմում եմ ես կնկանս:

Իսկ նա սկսում է ինձ շտապեցնել, որ ես իսկույն ևեթ մեկնեմ:

— Ի՞նչ գիտես, թե ինչ է: Միգուցե իսկապես մի կարևոր բան է: Գուցե մի բան է ապսպրում: Տորեն է...

Հեշտ է ասել՝ գնա Օդեսա: Օդեսա գնալը ծախսի բուն է: Բայց եթե գործը պահանջում է, ինձ ո՞վ կարող է ետ պահել: Մի խոսքով, մի քանի ռուբլի ճարեցի, գնացք նստեցի և գնում եմ Օդեսա: Տեղ հասա, սկսեցի հարցնել, թե որտե՞ղ է գտնվում «Վիկտորիա» հյուրանոցը: Գտա:

— Ձեզ մոտ կա՞ ոմն Գորգելշտեյն,— հարցնում եմ:

— Կա՛, — պատասխանում են: — Բայց տվյալ րոպեին նա համարում չէ: Դուք պիտի նեղություն քաշեք շնորհ բերեք երեկոյան ժամը տասին:

Գալիս եմ երեկոյան ժամը տասին. Գորգելշտեյն չկա: Նրան կարող եմ տեսնել առավոտյան ժամը տասին. գալիս եմ առավոտյան: Ո՞ր է Գորգելշտեյնը: Չկա: Նա հենց նոր էստեղ էր և շատ խնդրեց, որ եթե դերաժնյացի մի մարդ իրեն հարցնի, նրան ասել, որ գա կամ կեսօրվա ժամը երեքին, կամ երեկոյան ժամի տասին: Գալիս եմ կեսօրվա ժամը երեքին, գալիս եմ երեկոյան ժամը տասին. Գորգելշտեյն չկա:

Կարճ ասած, վեց օր ու գիշեր քարշ եկա Օդեսայում, հիվանդացա, բաց աչքերով գիշերներ լուսացրի, և մի կերպ մեծ չարչարանքներից հետո արժանացա վերջապես Գորգելշտեյնի տեսությանը: Արտաքինից դատելով, նա շատ կարգին մարդ էր, սև, գեղեցիկ մորուքով: Ինձ շատ լավ ընդունեց, խնդրեց նստել:

— Այդ դո՞ւք եք,— դիմում է նա ինձ՝ կեսը հրեերեն, կեսը գերմաներեն,— դերաժնյացի այն մարդը:

— Ես եմ,— ասում եմ,— դերաժնյացի այն մարդը: Ի՞նչ կա:

— Ձեզ մոտ անցյալի տարի մի գերմանացի է ապրել:

— Այո, ինձ մոտ: Ինչ է որ:

— Ոչինչ: Այդ գերմանացին իմ կոմպանյոնն է մեքենաների գծով: Ես նրանից նամակ եմ ստացել Լոնդոնից: Նա գրում է, որ երբ դուք գաք Օդեսա, ինձ մոտ, անպայման սրտագին ողջույն հաղորդեմ և շնորհակալություն հայտնեմ՝ հարմար և խաղաղ «շտանցիոնի» համար, որը ունեցել է ձեզ մոտ, ինչպես նաև ձեր հյուրընկալության, սիրալիր վերաբերմունքի և ձեր ազնիվ ու բարեխիղճ վարվեցողության համար, որը նա երբեք ու երբեք չի մոռանա:

.....

Ահա թե ի՞նչ փորձանք էր եկել գլխիս: Մտածում եմ, որ եթե տոներից հետո ամեն ինչ բարեհաջող անցնի, Դերաժնյայից տեղափոխվեմ մի ուրիշ տեղ, կորչենք գնանք ուր

աչքներս կտրի, գնանք հեռու, թեկուզ սատանի ծոցը, մենակ թե ազատվենք էդ երիցս
անիծյալ նեմեցից, ա՛յ տարտարոսը կուլ տա նրան, հա՛...